Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2023թ. ապրիլի 20-ից 22-ը Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

Հակոբ Վարդանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, 2023 թվականի ապրիլի 20-ից 22

4. **Հրավիրող կողմը.**

Հրավերը ստացվել է ՌԴ փոխվարչապետ Ա. Օվերչուկից:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) խորհրդի հերթական նիստին և «ԵԱՏՄ տեսլական-2045» խորագրով աշխատանքային նիստին:

6. **Քննարկված թեմաները.**

ԵՏՀ խորհրդի հերթական նիստին քննարկվել է հետևյալը՝

- ԵԱՏՄ 2022 թվականի միջազգային գործունեության հիմնական ուղղությունների իրականացման ընթացքը,
- ԵԱՏՄ ներքին շուկայի գործունեության շրջանակներում խոչընդոտների վերացման հարցերը,
- Եվրասիական տնտեսական ֆորումի կանոնակարգում փոփոխություններ կատարելու հարցը,
- ԵԱՏՄ-ի ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայում էլեկտրաէներգիայի կենտրոնացված առևտուրը օր առաջ կազմակերպումն իրականացնող կազմակերպության սահմանումը:

«ԵԱՏՄ տեսլական-2045» խորագրով աշխատանքային նիստին քննարկվել են եվրասիական մակրոտարածաշրջանում տնտեսական զարգացման վրա ազդող գործոնները, այդ թվում՝ ապագլոբալացումը, 4-րդ արտադրական հեղափոխությունը, կլիմայական օրակարգը, էներգետիկ և տրանսպորտային անվտանգությունը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Քննարկվել են թվայնացման և թվային տեխնոլոգիաների զարգացման ոլորտում ԵԱՏՄ-ին և ԵԱՏՄ-ի ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկային վերաբերելի հարցեր: Ելույթներ են հնչել ԵԱՏՄ պայմանագրով սահմանված 4 նպատակների իրագործմանն ուղղված գործընթացների խթանման վերաբերյալ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպման արդյունքներով փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Հանդիպման արդյունքներով հավանության են արժանացել Բարձրագույն եվրասիական տնտեսական խորհրդի և Եվրասիական միջկառավարական խորհրդի առաջիկա նիստերի օրակարգերը: Դիտարկվել է Եվրասիական տնտեսական ինտեգրացիային ուղղված ռազմավարական ուղղությունների իրականացման ընթացքը: Վերջնական զեկույցը կներկայացվի ԵԱՏՄ անդամ երկրների ղեկավարներին՝ Բարձրագույն եվրասիական տնտեսական խորհրդի նիստի ընթացքում:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը**

28.04.2023թ.